Ա Ռ Ա Ր Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 23-Ա ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 23-Ա որոշումը չի համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Բացի այդ, որոշման նախաբանում հղում է կատարվել ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 8-ի թիվ 17-Ա որոշմանը, որը չի համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներին: Իսկ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի դրույթներին հղում կատարելիս անհրաժեշտ էր նշել օրենսդրական ակտի հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի կամ ենթակետի համարը:

Որոշման մեջ չի պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանը, այսինքն՝ անհրաժեշտ էր նշել ստորագրող պաշտոնատար անձի անվան միայն սկզբնատառը:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
23.03.2022թ.